ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1962 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Պ. Հ. Հակոբյան

ԱԲՈՎՅԱՆԻ ԿԻԵՎՅԱՆ ՁԵՌԱԳԻՐԸ

Հայ մեծ լուսավորչի այս ձեռագրի հայտաբերումը սրովյանագիտության համար կարևոր նշանակություն ունի: Շնորհիվ դրա՝ հրապարակ են գալիս Աբովյանի գրական ժառանգության միանգամայն անծանոթ էջեր, ընդարձակվում են մեր իմացություններն Աբովյանի և ռուս գրող ու պատմաբան Ա. Ն. Մուրավյովի (1806—1874) փոխհարաբերությունների մասին, բացվում են Աբովյանի գործունեությունն ուսումնասիրելու նոր աղբյուրներ, որոնք իրենց հերթին աբովյանագետների առջև խնդիր են դնում երախտավոր հեղինակի անձին ու գործին վերաբերող գրական նշխարների որոնումը ծավալել ավելի ընդարձակ շառավղով՝ շանտեսելով մինչև իսկ ամենաանհուսալի արխիվային հավաքածուները:

1959 թվականի դեկտեմբերին ուղևորվելով Կիև՝ մեր առջև դրել էինք մի ուրիշ, համեստ խնդիր, պարզել՝ չե՞ն պահպանվել արդյոք Կիևի համալսարանի երբեմնի ռեկտոր, ռուս նշանավոր աստղաբաշխ Վ. Ֆեոդորովի (1802—1855, 24 III) և ուկրաինացի գրող-մանկավարժ, իսկ ավելի ուշ՝ գրաֆիկական հաստատությունների դեկավար գործիչ Ի. Վ. Ռոսկովշենկոյի (1809—1889) անձնական արխիվները և եթե այո՛, ապա չկա՞ն նրանցում Աբովյանի մասին անծանոթ վավերագրեր: Դրա համար ունեինք որոշ ակնկալիքներ:

Վ. Ֆեոդորովի[1] հետ Աբովյանը ծանոթացել և մտերմացել էր դեռևս 1829 թվականին, պրոֆ. Ֆ. Պարրոտի Արարատյան գիտարշավի օրերին: Շուրջ կես դար առաջ հրատարակվել է նրա մի նամակ ուղղված ռուս բանաստեղծ Ն. Մ. Յազիկովին, որի մեջ ժլատ ակնարկներ կային Աբովյանի մասին[2]: Էստոնական ՍՍՌ Պետարխիվում պահվող մի վավերագրից պարզվում է, որ Արարատյան վերելքի շրջանում (1829 թ., սեպտեմբեր—հոկտեմբեր) Ֆեոդորովը պահել է օրագիր, որի պատճենը ժամանակին ուղարկված է եղել Դորպատի համալսարանի վարչությանը[3]: Դորպատում ուսանելու առաջին երկու տարիներին Աբովյանը սիրելի մարդ է եղել Ֆեոդորովի տանը, ուր հանդիպել և գրուցել է տեղի համալսարանին կից Պրոֆեսորական ինստիտուտի ուսանողների հետ. «Ամենեբեան յոտին կանգնին և համբուրիւ ընկալնուն զիս»,—գրել է Աբովյանն իր այցելություններից մեկի առիթով[4]: Ինչ վերաբերում է Ռոսկովշենկոյին[5], ապա վերջինս 1839 թվականից պաշտոնավարել է Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությունում և եղել է Աբովյանի

---

[1] *Կենսագրական մանրամասնություններ Վ. Ֆեոդորովի մասին տե՛ս* Е. В. Петухов, Императорский Юрьевский бывший Дерптский университет за сто лет, Юрьев, 1902, стр. 499—501. Н. И. Пирогова, Сочинения, т. I, СП-бург. 1887, стр. 346. Г. В. Левицкий. Астрономы Юрьевского университета с 1802 по 1894 г., Юрьев, 1899, стр. 145—159. A. Hasselblatt und Dr. G. Otto, Album Academicum der Kaiserlichen Universitat Dorpat, Dorpat, 1889, S. 125 *և այլն։*

[2] *Տե՛ս* Письма Н. М. Языкова к родным, под редакцией Е. Петухова, СП-бург, 1913, стр. 400—402 *(Նամակը գրված է 1829 թ. նոյեմբերին—Գ. Հ.)։*

[3] *Տե՛ս ֆ. 402, ց. 3, գ. 1276, թ. 206։ Օրագրերի բնագիրը չի՛ հայտաբերված։*

[4] *Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VI, Երևան, 1955, էջ 64։ Պրոֆեսորական ինստիտուտում այդ ժամանակ սովորում էին՝ հռչակավոր Ն. Պիրոգովը (1810—1881), ապագա ռուս գիտնականներ՝ Ի. Շիխովսկին (1800—1854), Ֆ. Ինոզեմցևը (1802—1869), Մ. Կուտորգան (1809—1886) և ուրիշ շատերը։ Ֆեոդորովը Դորպատից մեկնել է 1832 թ.։*

[5] *Ի. Վ. Ռոսկովշենկոյի մանրամասն կենսագրություն տե՛ս* «Русский биографический словарь» *(համապատասխան հատորը), 1918, էջ 146—148։*

իշխանավորներից: Պահպանվել են՝ Ռոսկովշենկոյին ուղղված Արովյանի մի անբվակիր նամակի սևագրությունը և բազմաթիվ պաշտոնական գրություններ (1841—1848): Առաջին հերթին մեզ հետաքրքրում էր հիշյալ նամակի բնագիրը: Կասկածից դուրս էր, որ Վ. Ֆեոդորովի և Ի. Ռոսկովշենկոյի անձնական արխիվները կրնձեռեին նոր նյութեր, եթե միայն կատարված որոնումներն ինչպես 1959 թվականին, այնպես էլ նրանից հետո՝ ապարդյուն չանցնեին: Ցայժմ չհաջողվեց գտնել ո՛չ Ֆեոդորովի և ո՛չ էլ Ռոսկովշենկոյի արխիվների հետքերը, և դժվարանում ենք ասել նաև, թե արդյո՞ք խնայել է դրանց ժամանակի ավերիչ ձեռքը...

Հակառակ դրան՝ Կիևյան արխիվները ընձեռեցին բոլորովին այլ կարգի նյութեր՝ Արովյանի պատմական համառոտ ակնարկների մի ձեռագիր, որի գոյության մասին, առհասարակ, ոչինչ հայտնի չէր:

Հիշյալ ձեռագիրը պահվում էր Ուկրաինական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տ. Շևչենկոյի անվան Պետական հանրային գրադարանի ձեռագրերի բաժնում, Կիևի նախկին Հոգևոր ակադեմիայի հավաքածուի № 427 թղթածրարում («Հայկական ժողովածու» խորագրով), որ տակավին 1879 թվականին ոուս գրող և պատմաբան Անդրեյ Նիկոլաևիչ Մուրավյովի (դեկաբրիստ Ն. Մուրավյովի եղբոր) ժառանգներն՝ իրենց հանգուցյալ հոր կամքը կատարելով, նվիրել էին Կիևի Հոգևոր ակադեմիային[6]:

Այն իրենից ներկայացնում է 22×18 չափսի 24 էջից բաղկացած մի տետրակ, ծայրից ծայր գրված Արովյանի մարգարտաշար ձեռագրով (ռուսերեն): Տետրակի առաջին վեց էջերն զբաղեցնում է «Артаксата» (Արտաշատ), 7—13 էջերը՝ Двин (Դվին), 14—21 էջերը՝ Ани (Անի) և 22—23 էջերը՝ «Акори или Арк-ури» (Ակուռի կամ Արկուռի) ակնարկները: Վերջին 24-րդ էջը մնացել է մաքուր: Տետրակն ընդհանուր խորագիր չունի, որ հիմք է տալիս ենթադրելու, թե նրան նախորդել է մի երկրորդ տետրակ ևս, որ մեզ չի՛ հասել և որի բովանդակությունը պետք է որ կազմած լիներ՝ եզիդիների մասին Արովյանի գրած ազգագրական տեղեկանքը, որ զետեղված է Մուրավյովի «Грузия и Армения» գրքում[7], Երևան քաղաքի և Կեչառույքի տաճարի մասին համառոտ պատմական ակնարկներ, որոնց սևագրերը այնուամենայնիվ մնացել են Արովյանի թղթերում[8], և մեզ անծանոթ ուրիշ այլ նյութեր: Հատկապես Կեչառույքի տաճարի մասին Արովյանի գրած ակնարկի առթիվ ո՛չ մի երկբայություն չունենք, քանի որ պահպանված սևագրի առանձին արտահայտություններ ուղղակի հանդիպում են Մուրավյովի «Грузия и Армения» գրքի հենց սկզբնական էջերում (մաս II):

Ստորև զուգահեռաբար Արովյանից և Մուրավյովից բերում ենք համապատասխան հատվածներ, որոնցից դժվար չէ կռահել, որ Մուրավյովը ձեռքի տակ է ունեցել Արովյանի ակնարկը և նրա հետևությամբ կազմել իր վերոհիշյալ ուղեգրության Կեչառույքի տաճարի հիմնադրման պատմությանը հատկացված հատվածը, միաժամանակ դիմելով նաև Արովյանի «Ани» ակնարկի 20-րդ էջին, ուր խոսվում է Կոստանդին Մոնոմաքոսի կողմից հայոց Գագիկ թագավորին խաբեությամբ Կոստանդնուպոլիս հրավիրելու և կալանավորելու մասին:

Արովյան «О храме Кечаруйк»

На месте нынешнего храма в Дарачичакском ущелье выстроена была в 897-м году церковь армянским вельможею Апиратом, а самый храм сооружен в 1039-м году знаменитым Григорием Паглавуни, прозванным Магистросом, управителем Армении со стороны греков во время императора Мономаха, державшего последнего

Մուրավյով «Грузия и Армения»

Григорий обосновал обитель Кечаруйскую в 1033 г. во имя великого своего предка, там, где уже существовала церковь, построенная за несколько лет прежде тем князем армянским Апиратом... Григорий Магистр соорудил обитель в эпоху горькую для народности Армянской, когда пала, вместе со столичным городом Ани,

---

6 Տե՛ս Известия церковно-археологического общества при Киевской духовной Академии за 1879 г., стр. 37—44։ Նաև՝ Ա. Լեբեդևի կազմած նույն հաստատության ձեռագրերի ցուցակը։

7 Տե՛ս «Грузия и Армения», ч. II, СП-бург, 1848, стр. 129—132։ Միանգամայն հակառակ իր սովորության՝ Մուրավյովը գրում է, թե «Եզիդիների մասին այս բոլոր տեղեկությունները ինձ հաղորդել է Արովյանը, որն անձամբ լսել է երկար ժամանակ նրանց մեջ ապրած մի հայ հոգևորականից» (իմա՛ Երևանի գավառական դպրոցի հայոց լեզվի և կրոնի ուսուցիչ արեղա Ղազար Տեր-Ղևոնդյանից—Պ. Հ.)։

8 Տպագրված են՝ Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VIII, Երևան, 1948, էջ 286 և 288։

армянского царя Гагика в плену в Константинополе, как это видно из надписи над южной дверью храма (VIII, 288).

третья царственная династия Багратидов, и греческий император Константин Мономах держал у себя пленником последнего царя Гагика... (ч. II, 8 и 10).

Ի՞նչ հանգամանքներում են ստեղծվել այս ակնարկները:

«Грузия и Армения» (մասն II) աշխատության, ինչպես նաև մի շարք անուղղակի վավերագրերի հաղորդած տվյալների բաղդատումից պարզվում է, որ Ա. Ն. Մուրավյովն Երևան է ժամանել 1846 թվականի հոկտեմբերի 16-ին, մի գիշեր մնացել է այստեղ և հաջորդ օրը մեկնել Էջմիածին, հոկտեմբերի 19-ի երեկոյան նորից վերադառնալով Երևան՝ Հայաստանի հիշարժան վայրերն այցելելու մտադրությամբ: Մուրավյովի և Արովյանի առաջին ծանոթությունը թերևս կարող էր տեղի ունեցած լինել հոկտեմբերի 16-ին կամ 17-ին, բայց որ հոկտեմբերի 19-ի գիշերը նրանք հանդիպել ու խոսել են իրար հետ, այդ արդեն անտարակույս է. Մուրավյովը հաղորդել է իր մտադրությունը՝ Հայաստանի հիշարժան վայրերն այցելելու մասին և խնդրել Արովյանի աջակցությունը, և Արովյանը համաձայնել է ուղեկցել նրան[9]:

Հոկտեմբերի 20-ի առավոտյան, մի երկու հարկավոր գործեր ավարտելուց հետո, գավառային վարչության մի երկու աստիճանավորների և կաթողիկոսի փոխարարի (թերևս տիրացու Գրիգոր Բերոյանի) ուղեկցությամբ Արովյանն ու Մուրավյովը ուղևորվում են դեպի Գառնի, դիտում տաճարի ու բերդի ավերակները, իսկ ապա դիմում հռչակավոր Դեղարդա վանքը: Վիմափոր տաճարների դիտումը նրանք ավարտում են մայրամուտին և այդտեղ էլ գիշերում[10]: Հաջորդ օրը Արովյանը Մուրավյովին առաջնորդում է դեպի պատմական Հայաստանի մայրաքաղաք Դվինի ավերակները, հիշտ և հիշտ հենց այն վայրը, ուր ներկայումս կատարվում են պեղումներ: Միջանկյալ նկատենք, որ անգամ ստկդ. Ն. Մառը, որը Դվինում հետախուզական պեղումներ էր կատարել տակավին 1899 թվականին, այնուամենայնիվ չկարողացավ որոշել, թե իրականում ո՞ր քաղաքն է բացում՝ Դվի՞նը, թե՞ Արտաշատը[11]: Ուրախալի է, որ նման տարակուսանքն օտար է եղել Արովյանին, և նա նշտարեն իմացել է Դվին քաղաքի տեղը: Գիշերելով Ղամարլու գյուղում, Զանգիբասարի գավառամասի պետի (Ի. Ե. Կիտիցինի) տանը, հոկտեմբերի 22-ին նրանք դիմում են դեպի Արարատ: Արարատի կազակական պահակակետից բարձ ձիեր և պահակախումբ են վերցնում, իսկ Նոր-Ակոռի գյուղից՝ տանուտերին (Սաղաթել Խոջայանին—Պ. Հ.)՝ հասնելով մինչև պատմական Ակոռի գյուղի և սուրբ Հակոբ վանքի ավերակները: Նույն օրն Արովյանը Մուրավյովին հաղորդում է տեղեկություններ՝ եգիպտիների ծագման ու հավատալիքների, Ակոռիի հիմնադրման պատմության, սբ. Հակոբ վանքի ճարտարապետական կառուցվածքի մասին[12], բարգմանում է Սաղաթել Խոջայանի վկայությունները Արարատի 1840 թ. ժայթքման և Ակոռիի կործանման մասին և այլն: Այդ օրը նրանք գիշերում են Արալիխի կազակական պահակակետում: Հոկտեմբերի 23-ի մեծ մասն անցկացնում են Խոր-Վիրապ վանքում, դիտում շրջակայքը՝ ուր երբեմն եղել է պատմական Արտաշատը, որի ավերակներից «կանգուն է մնացել այժմ միայն Խոր-վիրապի վանքը»[13]:

---

9 «По личной просьбе г. камергера Муравьева должен был сопутствовать ему по некоторым древним местам Армении»—*գրել է Արովյանը Անդրկովկասյան դպրոցների վերատեսչին հղած մի զեկույցում (տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 2212, թ. 26, հմմտ. «Դիվան Խաչատուր Արովյանի», հ. I, Երևան, 1940, էջ 177)։*

10 *Մուրավյովն իր գրքում (էջ 113 և 118) մեջ է բերել Գեղարդա վանքի մասին պատմվող հայ ժողովրդական երկու ավանդություններ՝ ինչի՞ց է ծագել վանքի տաճկական «Գյոր-գեչ» անվանումը և ովքե՞ր են կառուցել վանքը։ Երկու ավանդություններն էլ անտարակույս նրան Արովյանն է հաղորդել, մանավանդ որ հենց դրանց վրա, այլ առիթներով ևս, նա ուշադրություն է դարձրել (տե՛ս «Մենաստան սուրբ Գեղարդայ վանից» բանաստեղծության ծանոթագրությունները. Խ. Ա ր ո վ յ ա ն, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, Երևան, 1948, էջ 227)։*

11 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, *Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 38։*

12 *Իր գրքում (էջ 140) Մուրավյովը այսպես է գրում. «Ինչպես ինձ ասացին՝ իր ճարտարապետությամբ եկեղեցին հիշեցնում էր նույն ժամանակները կառուցված սբ. Հռիփսիմեի տաճարին» և այլն։ Այդպիսի բան Մուրավյովին կարող էր միայն Արովյանն ասել, որը Ակոռիի հնություններին ծանոթ էր դեռ 1829 թ.։*

13 *Քառացի Մուրավյովի գրքից (էջ 147—148)։*

Ինչպես հայտնի է՝ պատմական Արտաշատի ավերակներից զետնի երեսին ոչինչ չի՛ մնացել, և գիտնականներին այժմ էլ շատ է մտահոգում նրա տեղադրությունը, ըստ որում նորագույն հետազոտողները[14] մատնանշում են նույն այն վայրը, ուր մի ժամանակ Արովյանը առաջնորդել էր Մուրավյովին: Հոկտեմբերի 24-ին Արովյանն ու Մուրավյովն արդեն Երևանում էին: Մուրավյովն այդ կամ հաջորդ օրը այցելում է գավառական դպրոց, ծանոթանում ուսման դրվածքին[15] և հոկտեմբերի 25-ին վերստին դառնում էջմիածին: Վերջին անգամ Արովյանը հանդիպում է Մուրավյովին էջմիածնում՝ նույն հոկտեմբերի 27-ին՝ մյուսոնաբերության հանդեսի օրը: Ինչպես անուղղակիորեն տեղեկանում ենք «Ուղևորություն դեպի Անի ավերակները» աշխատությունից՝ Մուրավյովն այդ ժամանակ «ԱՆԶԱՄԲ ԴՐՎԱՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ ՀԱՅՏՆԵՑ» նրա զերմաներեն լեզվով գրած «Քրդեր և եզիդիներ» պատմա-ազգագրական ուսումնասիրության մասին , որ երևի, Երևանից էջմիածին մեկնելիս՝հոկտեմբերի 25-ին, Մուրավյովը խնդրել էր Արովյանից՝ այդ ժողովուրդների պատմության և կյանքի ու կենցաղի մասին տեղեկություններ հաղելու համար:

Հոկտեմբերի 28-ին՝ բողնելով էջմիածինը, Մուրավյովը բռնում է վերադարձի ուղին դեպի Տփխիս, իսկ այնտեղից էլ՝ դեպի Ռուսիա: Անտարակույս Մուրավյովն իր հետ տանում էր նաև Արովյանի գրած համառոտ ակնարկները պատմական Հայաստանի երեք մայրաքաղաքների (Արտաշատ, Դվին, Անի) և ուշագրավ հնությունների (Ակոռի, Կեչառույք) մասին: Այսպիսով՝ Արովյանն ու Մուրավյովը միասին են անցկացրել հոկտեմբերի 20—24-ը և 27—28-ը, ընդ որում հոկտեմբերի 28-ին ընդմիշտ հրաժեշտ տալով միմյանց: Բաց են մնում հատկապես, հոկտեմբերի 25—26-ը, ինչպես նաև նախորդ և հաջորդ օրերի (24 և 27) մի մասը: Մեր համոզմամբ՝ Կիևյան նորահայտ ձեռագրերի գրությունը պետք է վերագրել հիշտ և հիշտ նույն այդ օրերին՝ գլխավորաբար հոկտեմբերի 25-ին և 26-ին, որովհետև հոկտեմբերի 24-ից առաջ և 27-ից հետո նրանց գրության մասին ո՛չ մի խոսք չի կարող լինել:

Արովյանի առաջնորդությամբ այցելելով Հայաստանի ուշագրավ հնությունները և բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ հաղելով նրանից Հայաստանի պատմական հուշարձանների և հայոց պատմության ականավոր գործիչների մասին՝ հարկավ Մուրավյովն անձամբ խնդրել է նաև Անի, Արտաշատ, Դվին քաղաքների և մի քանի այլ վայրերի մասին միաժամանակ գրավոր տեղեկություններ ևս տալ: Արովյանը հոժարակամորեն ընդառաջել է նրան և այդ առիթով էլ կազմել հրատարակվող պատմական ակնարկները:

Արովյանի տրամադրության տակ եղած ժամանակն այնքան քիչ էր (ընդամենը՝ 3 օր), որ նա գիտակցաբար հրաժարվել է նոր պրպտումներից և բավարարվել է այն նյութերով և փաստերով, որոնք ծանոթ էին իրեն Խորենացու, Փավստոսի և Ագաթանգեղոսի պատմագրքերից, ինչպես նաև ամբարված էին Մխիթարյան գիտնականներ Չամչյանի ու Ինճիճյանի երկասիրություններում: Անկասկած է, որ ակնարկները գրելիս Արովյանը ձեռքի տակ ունեցել է՝ Խորենացու (Ամստերդամի 1695 կամ Վենետիկի 1752 թ. հրատարակությունը), Ագաթանգեղոսի (Օրբգյուղ, 1822), Փավստոս Բուզանդի (Վենետիկ՝, 1832՝) պատմագրքերը, Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ը (3 հատոր, Վենետիկ, 1784—1786), Ինճիճյանի «Ստորագրութիւն հին Հայաստանեայց»-ը (Վենետիկ, 1822), ինչպես նաև Հովհաննես Դրասխանակերտցու Հայոց պատմության մեզ անծանոթ մի գրչագիր օրինակ: Միջնորդաբար՝ Ինճիճյանի և այլ աղբյուրների միջոցով օգտագործել է նաև հունա-հռոմեական պատմագիրներ՝ Ստրաբոնի, Պլինիուսի, Պլուտարքոսի, Տակիտոսի, Դիոն Կասիոսի, ինչպես նաև Պրոկոպիոս Կեսարացու առանձին վկայություններ և Զենոբ Գլակի որոցուցմունքներ: Ամենից ավելի, իհարկե, Արովյանն օգտվել է Ինճիճյանի «Ստորագրութիւն»-ից՝ երբեմն ռուսերեն փոխադրելով նրա գրքի՝ Արտաշատ, Դվին և Անի քաղաքներին հատկացված ենթագլուխների առանձին կտորներ: Եվ դա բնական էր, քանի որ Ինճիճյանի այդ գիրքը մի արժեքավոր պատմա-աշխարհագրական տեղեկատու էր և փաստական նյութի ընդգրկման առումով լավագույնն՝ իր ժամանակին:

Իր ակնարկների մեջ Արովյանը սեղմ ձևով շարադրել է հին Հայաստանի պատմական կյանքում մեծ դեր խաղացած Արտաշատ, Դվին և Անի քաղաքների հիմնադրման ու զարգացման պատմությունը, մատնացույց արել օտար զավթիչների դեմ այդ քաղաքների մղած հերոսական պայքարի առանձին դրվագներ՝ հավաստելով դրանք սկզբնաղբյուրներով: Պատմահայր Խորենացու նման,

---

[14] *Տե՛ս* Я. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1954, стр. 52 (изд. 2-ое);

[15] *Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 78, թ. 4ա։*

[16] *Տե՛ս Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, Երևան, 1956, էջ 195։*

Արովյանի ուշադրությունից չեն վրիպել նաև ժողովրդական անգիր զրույցները (օրինակ՝ Անիի Հովվի եկեղեցու մասին), որոնց մեջ նա տեսել է ժողովրդի իրական-պատմական կյանքի հեռավոր արձագանքները: Ամենից ջերմ Արովյանը գրել է Անիի մասին. Քանի որ Անին Արովյանի համար միշտ էլ եղել ու մնացել է պաշտամունքի առարկա, ընկալվել որպես հայ ժողովրդի հոգևոր մշակույթի բարձրակետ, որպես անկախ Հայկական պետականության խորհրդանիշ:

Մի վերջին հարց ևս: Ի՞նչ ձևով է Մուրավյովն օգտագործել Արովյանի պատմական ակնարկները:—Վերջինների բաղդատությունը Մուրավյովի «Грузия и Армения» աշխատության համապատասխան հատվածների հետ ցույց է տալիս, որ նա վերապատմած ձևով մեջ է բերել Արովյանի նկարագրած գրեթե բոլոր դեպքերն ու դիպվածները, կանգ առել համարյա նույն պատմական գործիչների վրա, երբեմն կրկնել մինչև անգամ նրա փաստական անճշտությունները: Օրինակ, «Անի» ակնարկում Արովյանը գրել է, թե Տրդատ Մեծը Շիրակը նվիրել էր Մամիկոնյաններին, նույնն է կրկնում նաև Մուրավյովը (էջ 263), մինչդեռ Շիրակի տերերը Կամսարականներն էին: Կամ՝ Արովյանն Անիի Գակաշեն տաճարի կառուցումը վերագրում է 1000 թվականին, նույնն է ասված նաև Մուրավյովի գրքում (էջ 275), մինչդեռ այդ տաճարի կառուցումն սկսվել է 1001 թվականին և ավարտվել 1015-ին: Մուրավյովը օգտագործել է նաև Արովյանի առանձին բնութագրականները: Օրինակ՝ Արովյանն Անին կոչել է Հայկական Պալմիրա: Անիին նույն անվանումն է տալիս Մուրավյովը ևս («Армянская Пальмира красовалась вдали»—էջ 259): Կամ՝ Պարսից Շապուհ արքային Արովյանը «Արտաշատ» ակնարկում տալիս է «Հուլիանոսին հաղթող» մակդիրը, նույն մակդիրին մենք պատահում ենք նաև Մուրավյովի մոտ («Победитель отступника Юлиана»—էջ 146): Մուրավյովը որոշ խմբագրմամբ օգտագործել է նաև Արովյանի առանձին արտահայտություններ: Օրինակ՝ «Ակոռի» ակնարկն Արովյանի մոտ սկսվում է այսպես. „Акори или Арк-ури (насаждение лозы). Так названный, по преданию потому, что там будто насадил Ной первые лозы...": Մուրավյովի մոտ հետևյալ կերպ է. „Арх-ури значит собственно по-армянски: „Насадил виноград", и незапамятное предание указывает на место сие... как на то, где действительно праотец Ной насадил первую лозу" (էջ 138): Կամ Արտաշատի մասին Արովյանն ասում է, թե „... по совету коего (=Аннибала) Арташес или Артаксеркс I из династии Арсакидов основал, а Артаксеркс II возобновил его": Մուրավյովի մոտ կարդում ենք. „Артаксеркс I, из рода царей Парфянских основал сию столицу по совету врага Римлян, Аннибала... Артаксеркс II ее украсил" (էջ 146) և այլն:

Ուրախալի էր անշուշտ, որ Մուրավյովի գրքի միջոցով ընդարձակ տեղեկություններ էին տրվում օտարներին Հայաստանի և հայ ժողովրդի, հայոց պատմության և հայ ականավոր գործիչների մասին, որին նպաստելու համար է անշուշտ, որ Արովյանն այնքան կարճ ժամանակամիջոցում կազմել է իր Ակնարկները, բայց ցավալի է, որ Ա. Ն. Մուրավյովն իր գրքում ուղղակի խոստովանություն չի արել Արովյանից ստացած այդօրինակ օգնության մասին[17]: Բարեբախտություն է, որ հայտնաբերվեց ներկա ձեռագիրը և բաղում տասնամյակներ հետո մեջտեղ եկավ նշմարտությունն հայ մեծ գրողի և ռուս գործչի իրական փոխհարաբերությունների մասին[18]:

Ստորև, հայերեն բարգմանությամբ, մեջ ենք բերում Ա. Ն. Մուրավյովի համար Արովյանի գրած պատմական ակնարկները, որպես նավելված կցելով նրանց նաև եզիդիների մասին արդեն հիշված պատմական տեղեկանքը, որ Մուրավյովը մեջ է բերել իր «Грузия и Армения» ուղեգրության 2-րդ մասում:

---

17 *Բացառությամբ է կազմում եզիդիներին նվիրված ակնարկի վերջում եղած հիշատակությունը:*

18 *Իհարկե, նախքան այս Արովյանի և Մուրավյովի փոխհարաբերություններին անդրադարձել են և ուրիշները (Բեյ-Մամիկոնյան, Կ. Գրիգորյան, Ի. Նիկոլոպով), սակայն նրանք Մուրավյովի գրքում եղած մի քանի բառերը մեջ բերելուց այն կողմ չեն անցել. «Արովյանը միացնում էր Դորպատյան համալսարանի կրթությունը երկրամասի տեղական գիտելիքների հետ» (մասն 2-րդ, էջ 127), նրանց անծանոթ են ո՛չ միայն Արովյանի այս ակնարկները, այլև Հայաստանում Արովյանի և Մուրավյովի կատարած շրջագայությունների ճշգրիտ ժամանակն ու ուղեգիծը:*

ԱՐՏԱՇԱՏ

Հին հայկական քաղաք. ըստ Մովսես Խորենացու՝ հիմնադրել է Արտաշես Բ-ն I դարու վերջին և II դարու սկզբին (Ք. ծ. հ.), իսկ ըստ հռոմեական և հունական պատմագիրների, ինչպիսիք են՝ Ստրաբոնը, Պլինիուսը և Տակիտոսը, նրա սկզբնավորումը վերագրվում է կարթագենցի Աննիբալին, որի խորհրդով Արտաշես կամ Արտաքսարքսես Ա-ն, Արշակունիների հարստությունից, հիմնադրել է այն, իսկ Արտաշես Բ-ը՝ վերաշինել։ Նույն այդ պատմագիրները տալիս են այս քաղաքին տարբեր անուններ՝ Արտաքսատա, Արտաքսասատա, Արտաքսիոսոտա, Արտաքսերքսոքդիստե և, վերջապես, Ներոնեյա՝ 35 թվականին վրացիների, 58 թվականին պարթևների և, ի վերջո, այն պաշտպանել չկարողանալու պատճառով ամբողջությամբ ոչնչացնող Կորբուլոնի կողմից այս քաղաքն ավերելուց հետո Տրդատ Մեծի ձեռքով վերաշինելու և ի պատիվ հռոմեական կայսր Ներոնի այն վերանվանակոչելու պատճառով[1]։

Արտաշես Բ-ի ձեռքով այս քաղաքը վերաշինելու մասին Մովսես Խորենացին ասում է հետևյալը. «Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր[2], և հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ։ Զեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրեաց. վասն որոյ անաշխաս։ և երագ շինեալ՝ կանգնէ և ի նմա մեհեան և փոխէ ի նա ի Բագարանէ ա) զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհին։ Եւ յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որ փախեալ էին անդր յԱրմաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ։ Նա և զամենայն վայելչութիւն քաղաքին Երուանդայ, զոր տարեալ էր յԱրմաւրայ և զոր անդէն արարեալ նորա՝ փոխէ յԱրտաշատ. և առաւել ևս յինքենէ յօրինէ իբրև զքաղաք արքայանիստ» (Մ<ովսէս> Խ<որենացի>, գիրք Բ, գլուխ ԽԶ)[4]։

Այդ նույն բանը վկայում է նաև Ստրաբոնը (գիրք XI, էջ 529), գովելով և

ա) Բագարան, այսինքն՝ կուռքերի հավաքատեղի. այսպես է անվանել հայոց թագավոր Երվանդ Բ-ը, որի հրամանով Արմավիրից փոխադրվել են հայոց բոլոր կուռքերը։ Այս քաղաքն ընկած էր Երվանդաշատ քաղաքից 5 մղոն հյուսիս, և նրա ավերակներն այժմ էլ երևում են Կողբի ճանապարհին (ծան. Խ. Արովյանի)։

1 Այս պարբերության մեջ առկա է ժամանակագրական անճշտություն։ Պարթևներն Արտաշատը գրավել են ո՛չ թե 58, այլ 52 թվականին։ 58 թ. իրականում Արտաշատն անցել է Կորբուլոնի ձեռքը, որն այն կործանել է հաջորդ՝ 59 թ. գարնանը։ Արտաշատը վերաշինվել և Ներոնեյա է կոչվել 66 թ.։ Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 324, 336, 352։

2 Բնագրում Մեծամոր տեղանվան կողքին Արովյանը փակագծերի մեջ ավելացրել է. «Գառնի-չայ»։

3 Բնագրի մեջ այնուհետև Արովյանը փակագծերի մեջ ավելացրել է. «որը և հաստատում է Պլուտարքոսը»։

4 Համեմատի՛ր Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 176—177։ Մեջբերված հատվածի գլխահամարը՝ գիրք Բ, գլուխ ԽԶ = 46 (ըստ քննական հրատարակության՝ գլուխ ԽԹ—Պ. Հ.) ցույց է տալիս, որ Արովյանի օգտագործած Խորենացին եղել է կամ Ամստերդամի (Յամստէլոդամի) 1695 թվականի տպագիրը, կամ էլ Վենետիկի 1752 թվականի հրատարակությունը (որ արտատպված էր նախորդից), քանի որ գլուխների նման կարգ առկա է միայն Խորենացու Հայոց պատմության ամստերդամյան հրատարակության ու նրանից կատարված արտատպության մեջ։

դիրքը, և՛ փարթամությունն այս քաղաքի[5], որը Դիոնի պատմածի (հատոր I, էջ 107) համաձայն Տիգրան Մեծն ինքնակամորեն հանձնեց Պոմպեոսին[6]։ Ինչպես հայ, այնպես և օտար բոլոր պատմագիրներն Արտաշատն ենթադրում են Արաքսից ձախ, Գառնի-չայի արևելյան կողմում, ուր այժմ կա մի հսկայական ճահիճ՝ կառուցված կարծես թե թիրակղզու, բլրի վրա և միայն հյուսիսային կողմում ունենալով վիթխարի պարիսպներով, աշտարակներով և խրամներով շրջափակված մի պարանոց։ Այս քաղաքը միջնաբերդի կենտրոնում էլ ուներ մի հատուկ ամրոց, որտեղ գտնվում էր նաև մի խոր վիրապ և ուր նետվել է Հայաստանի լուսավորիչ Գրիգոր Մեծը, ինչպես գրում է այդ մասին Ագաթանգեղոսը (էջ 49)[7]։ Այս փոսը լցված էր տիղմով, որտեղից ո՛չ մի դատապարտյալ, սարսափելի դժնդակության, խորության և թունավոր օձերի պատճառով չէր փրկվում, բացի 14 տարի այնտեղ նստած և աստուծո ողորմածությամբ ողջ մնացած սուրբ Գրիգորից։

Ըստ այդ[8] և հայոց մյուս պատմագիրների[9], Արտաշատն իր դարպասների առջև և Արաքսի վրա ունեցել է Տափերական անունով կամուրջներ, իսկ Մեծամորը (Գառնի-չայ) Արաքսի հետ խառնելու տեղում՝ որսատեղիներ, ուր բազմիցս զոհվել են թշնամական զորքերը, որ և հստակորեն ապացուցում է նրա այժմյան տեղադրությունը։ Այստեղ է զոհվել իր ողջ շքախմբով նմանապես Տրդատի հորը՝ արտասովոր քաջության տեր Խոսրով Ա-ին դավաճանորեն սպանող Անակը՝ սբ. Գրիգորի հայրը։

---

5 Հմմտ. Ս տ ր ա բ ո ն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 57 («Հայաստանի քաղաքներն են՝ Արտաշատ, որ և կոչվում է Արտաշաշատ, հիմնված Աննիբալից՝ Արտաքսիաս թագավորի համար...») (XI, 14, 6) Նաև՝ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Նշված աշխատությունը, էջ 120—121։ Նկատենք, որ Արովյանի աղբյուրն եղել է Ստրաբոնի աշխարհագրության XI գրքի ո՛չ թե 529, այլ 528-րդ հատվածը։

6 Արովյանի աղբյուրն եղել է Դիոն Կասիոսի (մոտ 155—235) Հռոմեական պատմության 1-ին հատորի XXXVI գրքի 52 (1—4) հատվածը (հմմտ. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Նշված աշխատությունը, էջ 234), որ նա օգտագործել է Ղ. Ինճիճյանի մեջբերումից։

7 Ագաթանգեղոսի հաղորդածը խոր վիրապի և Գրիգոր Լուսավորչի շարչարանքների մասին թեպետ հոդվածի բնագրում Արովյանն առել է « »-ի մեջ, սակայն ուսերեն է փոխադրել շատ ազատ։ Պատմության բնագրում իրականում ասված է. «...հրաման տայր (Տրդատիոս—Պ. Հ.) կապել ոտիք և կապել ձեռօք և կապել պարանոցաւ խաղացուցանել զնա (զԳրիգորիոս—Պ. Հ.) յԱյրարատ գաւառ, և տալ զնա ի ղղնակ բերդին Արտաշատ քաղաքի, և իջուցանել ի վիրապ՝ ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մեռցի։ Եւ եղև նա յայնմ վիրապի ամս երեքտասան <...> իսկ յայն վիրապ, ուր ընկեցին զնա՝ պահեալ լինէր նա կենդանի շնորհիւ Տեառն իւրոյ։ Իսկ այլ մարդիկ, որ միանգամ իջուցեալ էր անդր՝ ամենեքեան մեռեալ էին վասն դժնդակ շարաշունչ դառնութեան տեղւոյն, վասն կարակում տղմին, օձախառն բնակութեան և խորութեանն» (Ա գ ա թ ա ն գ ե ղ ա յ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, ԺԱ § § 122 և 124, էջ 70—71—72)։ Ագաթանգեղոսի Պատմություն Արովյանի մատնանշված էջը՝ 49 (sic! 42) ցույց է տալիս, որ նրա ձեռքին է եղել Պատմության 1822 թ. հրատարակությունը (Օրթաղյուղ)։ Անկասկած Արովյանը ձեռքի տակ է ունեցել նաև Ջամչյանի Հայոց պատմության Ա հատորը, որի համապատասխան էջում (376) խոր վիրապում սբ. Գրիգորի բանտարկության տևողությունը, հակառակ Ագաթանգեղոսի՝ հաշված է 14 տարի։

8 Հմմտ. Ա գ ա թ ա ն գ ե ղ ա յ Պատմութիւն Հայոց, Նշված հրատարակությունը, Բ, § 33, էջ 23։ Նաև՝ Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, յՕրթադիւղ, 1822, էջ 10։

9 Արովյանը նկատի ունի Փավստոսին։ Հմմտ. Փ ա ւ ս տ ո ս ի Բ ի ւ զ ա ն դ ա ց ւ ո յ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, էջ 30 և 172 (գլուխ Գ, գլուխ ԺԲ և գլուխ Դ, գլուխ ԾԵ)։ Նույնը, Թիֆլիս, 1912, էջ 46 և 261։

Հեթանոսության ժամանակ այստեղ դրված կուռքերը ոչնչացրել է սբ. Գրիգորը, նրանց մեհյանները քանդել և այնտեղ եղած գանձերը բաժանել աղքատներին, իսկ քուրմերին ու սպասավորներին ծառայության դրել, ինչպես նաև նրանց պատկանող հողերն օգտագործելու համար հանձնել հենց նույն տեղերում կառուցված եկեղեցիներին, որոնք սակայն քարուքանդ արեց պարսից թագավոր Հաղկերտ Բ-ն և V դարում վերաշինեց ամենագերազանց զորավար Վահան Մամիկոնյանը։

Հունաց թագավոր Հուլիանոսին հաղթողը՝ հայոց թագավոր Տիրանին դավաճանորեն կուրացնողն ու նրա գահին Արշակ Բ-ին բազմեցնողը՝ իր քաջությամբ և անլուր դաժանությամբ հայտնի դարձած և պետությունը 73 տարի կառավարած պարսից թագավոր Շապուհ (ըստ հայ) կամ Սաֆար (ըստ օտար պատմագիրների) Բ-ը, հայոց ուրիշ շատ քաղաքներ ավերելուց հետո անհամար զորքով հարձակվելով Արտաշատի վրա ևս, ինչպես գրում է Բուզանդը (Չորրորդ դպրություն, գլուխ ԾԵ),—հիմնովին կործանեց այն, փոշի դարձրեց մինչև անգամ բերդի պատերն ու քարակերտ շենքերը՝ հափշտակելով անհամար գանձեր և հրի ու սրի մատնելով բոլոր հասակավորներին ու գերելով 9.000 ընտանիք հրեաներից և 40.000 հայերից. «և ոչ թողին բնաւ քար ի քարի վերայ»,—ինչպես ասում է պատմագիրը,—և «անմարդի և թափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցանէին»[10]։

Հետագա ժամանակներում, այդ նույն տեղում, նույն անունով կառուցվել է մի ավան, որ կամաց-կամաց նորից դարձել է քաղաք՝ պատմագիրներից անվանվելով մայրաքաղաք կամ Մեծ Արտաշատ։

VIII դարու վերջին Դվինի կաթողիկոսների ամառանոցն է եղել Արտաշատը, որը հետագայում նրանցից հափշտակել է արաբ կառավարիչ Խուզիմը։ Հենց այստեղ էլ V դարու կեսերին հավաքվել են հայոց բազմաթիվ հոգևորականներ ու իշխաններ՝ խորհրդակցելու և պատասխան տալու համար այն ժամանակ ողջ Հայաստանը կրակապաշտ դարձնելու փորձ անող պարսիկների նամակին։ Հայ պատմագիրները հաճախ շփոթում են այս քաղաքի անունը Դվինի հետ, հավանաբար՝ մեկը մյուսին մոտիկ լինելու պատճառով։ Այն վերջնականապես կործանել են՝ արաբները, թաթար մոնղոլները, թուրքերը և պարսիկները։

Դ Վ Ի Ն

Այսպես են կոչել ինչպես հայ, այնպես էլ օտար պատմագիրներն այժմյան Շարուրի և Գառնիբասարի գավառամասերի միջև ընկած ողջ երկրամասն, ուր անձամբ սբ. Գրիգորն եպիսկոպոս նշանակեց Դեմարիոսին։ Դվին (որ պարսկերեն նշանակում է բլուր) քաղաքի նախնական հիմնադրի մասին պատմությունը բացարձակապես լռում է։ Հայ պատմագիր Զենոբն ասում է Տրդատի մասին, թե նա կանգ առավ Դվինում 60.000 գերիներով[11], որից և հարկ է

10 Հմմտ. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, էջ 172 (նաև՝ Թիֆլիս, 1912, էջ 260—261)։ Փավստոսի Պատմությունն առաջին անգամ տպագրվել է Կ. Պոլսում, 1730 թվականին։ Արովյանի ձեռքի տակ թերևս Կ. Պոլսի հրատարակությունն է եղել։

11 Հմմտ. Պատմութիւն Տարօնոյ, զոր թարգմանեաց Զենոբ ասորի, Վենետիկ, 1832, էջ 41։ Նաև՝ Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 119 (այլընթերցումներ)։

եզրակացնել, որ եթե ո՞չ քաղաք, ապա ծայրահեղ դեպքում այս անվամբ բնակավայր արդեն գոյություն ուներ Հայաստանում, հեթանոսական ժամանակներում։ Դատելով ըստ Պրոկոպիոսի, որ Դվինը նկարագրում է որպես «և՛ ջրով, և՛ կլիմայով առողջարար, բարեբեր, Արզրումից ութ օրվա ճանապարհ հեռու ընկած, շրջակայքում մեծ հարթավայր, միմյանց մոտիկ ընկած անհամար գյուղեր, հնդկական, պարսկական և հռոմեական ապրանքների աշխույժ առևտուր ունեցող մի երկիր»[12], չպե՞տք է տարակուսել, որ այդտեղ արդեն ամենահին ժամանակներից, ծաղկել է Դվին քաղաքը, որի ընդարձակումն ու զարդարումը սակայն, Խորենացու կարծիքով (գիրք Ը, գլուխ Ը)[13], վերագրում են Տրդատի որդի Խոսրով Ը. Կոտակին, որը IV դարու կեսին, անառողջ օդի պատճառով մայրաքաղաքն Արտաշատից փոխադրեց այստեղ և քաղաքը զարդարեց հոյակապ շենքերով, որի համար և հայոց պատմագիրներն այն հաճախ անվանում են Ոստան, այսինքն՝ արքայական դուռ կամ արքայական քաղաք։ Նրանց պատմածների համաձայն էլ՝ Դվինն ընկած է եղել Արտաշատից հյուսիս, մի հարթ վայրում, Մեծամոր (Գառնի-չայ) գետի մոտ, որի անունով էլ հետագայում ողջ երկիրն ստացել է Մեծամորի Դաշտ անունը։ Շատ հայ թագավորներ ու մարզպաններ, հիշյալ քաղաքի տաք կլիմայի պատճառով, միայն այստեղ են անցկացրել ամառը։

V դարում Մեծ նահատակ և Հայաստանի սպարապետ Վարդան Մեծը Մամիկոնյան տնից՝ Հայաստանի քրիստոնեական հավատի անմահ պաշտպանը, շրջապատեց այս քաղաքը հսկայական պարիսպներով, աշտարակներով ու խրամներով և կործանելով պարսիկների շինած կրակապաշտական մեհյանը, կառուցեց նրա տեղն աստուծո տաճար սբ. Գրիգորի անունով և այդտեղ էլ փոխադրեց կաթողիկոսական աթոռը, որի մասին հայոց պատմագիր և կաթողիկոս Հովհաննը պատմում է հետևյալը. նա, այսինքն՝ Վարդանը «և պիղծն Վնդոյ ձերբակալ արարեալ յատրուշանի կրակին, զոր շինեաց ինքն իսկ ի Դվին՝ այրէր, և զորդի նորա Շերոյ ի վերայ բագնին զփայտէ կախէր։ Եւ ի տեղի բագնին շինէ եկեղեցի մեծ անուանակոչութեամբ Սրբոյն Գրիգորի, անդ փոխելով աթոռ հայրապետութեանն, և հաստատելով կացուցանէ ի նմա զմեծ հայրապետն Դիւտ»[14]։

---

12 Պրոկոպիոս Կեսարացու խոսքերը Արովյանը ռուսերեն է փոխադրել Ղ. Ինճիճյանի գրաբար թարգմանությունից (տե՛ս նույնի «Ստորագրութիւն հին Հայաստանեայց», Վենետիկ, 1822, էջ 463), բավականաչափ ազատ։ Իրականում Պրոկոպիոսը գրել է. «Դվինը խիստ բարեբեր երկիր է. ունի առողջարար օդ և լավ ջուր. Թեոդոսուպոլսից ութ օրվա ճանապարհ հեռու է ընկած. այդտեղ դաշտերը հարթ են՝ ձիով երթևեկելու համար հարմար. միմյանց մոտիկ ընկած բազմամարդ գյուղերն զբաղված են առևտրով, քանի որ Հնդկաստանից, Իբերիայից և պարսիկներին ու մինչև իսկ հռոմեացիներին ենթակա համարյա բոլոր ժողովուրդներից ապրանքներ են բերում այդտեղ, որ և նրանք վաճառում են»։

13 Հմմտ. Մ ո վ ս ի ս ի Խ ո ր ե ն ա ց ւ ո յ Պատմութիւն Հայոց..., էջ 265։

14 Տե՛ս Յ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս ի Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ւ ո յ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 59։ Հմմտ. նույն պատմագրքի Մ. Էմինի հրատարակությունը, Մոսկվա, 1853, էջ 35։ Թեպետ Հովհաննես Դրասխանակերտցու Պատմությունն առաջին անգամ հրատարակվել է 1843 թվականին, Երուսաղեմում, սակայն այդ գիրքը Ռուսաստան է թափանցել շուրջ տասը տարի հետո (տե՛ս Մ. Է մ ի ն, Երկասիրություններ, Մոսկվա, 1898, էջ 197)։ Դրանից ելնելով՝ կարծում ենք, որ Արովյանն օգտագործած պետք է լիներ Դրասխանակերտցու Պատմության որևէ գրչագիր օրինակ։ Այս եզրակացության օգտին է խոսում նաև այն փաստը, որ Դրասխանակերտցուց մեջբերած այս խոսքերը չեն հանդիպում Ինճիճյանի «Ստորագրության...» մեջ, որից բավականաչափ օգտվել է Արովյանը։

Վարդանի օրինակով շատ հայ իշխաններ հենց այնտեղ կառուցեցին իրենց համար հոյակապ տաճարներ, պալատներ և ամառանոցներ։

VIII դարու սկզբին, պատերազմներից և արաբական ու պարսկական զորքերից այն ամայանալուց հետո, Արաբիայի կառավարիչ Աբդըլ-Ազիզն երկրորդ անգամ ամրացրեց ու ընդարձակեց այս քաղաքը, և այդ ժամանակից՝ Դվինն սկսեց նախկինից էլ ավելի ծաղկել առևտրով ու հարստությամբ, այնպես որ Սմբատ Ա. Բագրատունի թագավորի ժամանակ, IX դարում, այս քաղաքն, արդեն Շահաստան (այսինքն՝ արքայանիստ կամ աթոռանիստ) անվամբ՝ համարվում էր լավագույններից մեկը[15] և Հայաստանի բոլոր քաղաքների մայրը։ Հենց նույն ինքը՝ Սմբատ Բագրատունին, ավելի հոյակապ ձևով վերաշինեց սբ. Գրիգորի եկեղեցին, որ և, պարսից թագավոր Խոսրով Բ-ին այս քաղաքի պարետի արած մատնության հետևանքով, պատճառ հանդիսացավ բերդը կործանելուն։ Այստեղ է նաև նահատակի մահով վախճանվել և կաթուղիկե եկեղեցու արևելյան կողմում թաղվել աստվածահաճո այր սուրբն Յիզտիբուզտը, որի վրա սրբատաշ քարերով կառուցվել է մի գեղեցիկ վկայարան։ Այստեղ եղել է մի ուրիշ եկեղեցի <էլ> սբ. Սարգիս անունով, որ այրել են հագարացիները և վերստին կառուցել է Ներսես Գ. Շինողը։

Ինչպես երևում է վերոհիշյալ պատմությունից, այս քաղաքն ավերել են նախ՝ պարսիկները, ապա՝ հունաց կայսր Հերակլը և, վերջապես, 641 թվականին հագարացիները կամ արաբները[16], որի ժամանակ զոհվել է 12.000 և գերի վերցվել 35.000 հոգի։ Նրանք էլ, ինչպես տեսանք, VIII դարում գրավել ու այրել են այս քաղաքն առաջնորդությամբ Աբդըլ-Ազիզի, որը դառնալով այս երկրի կառավարիչ՝ երկրորդ անգամ շինեց այն։ Նրանից հետո Սմբատ Ա-ը պաշարելով այն, գրավեց և որոշ ժամանակ պահեց իր ձեռքում։ IX, X, XI և XII դարերում Դվինը գտնվում էր Նախիջևան գավառի Գողթան գեղեցիկ վայրում բնակություն հաստատած հագարաց էմիրների ձեռքում, և այդ ժամանակամիջոցում՝ ձեռքից ձեռք անցնելով, կրեց սարսափելի աղետներ։

Դվինը ոչ պակաս տուժել է <նաև> պատահող ահավոր երկրաշարժերից. առաջինը՝ 862 թվականի մեծ պասին, տևելով երեք ամիս, երբ ոչնչացան շատ ժողովուրդ ու շենքեր, երկրորդը՝ IX դարու վերջին, Սմբատ Ա-ի օրերում, որի ժամանակ, Հոհան կաթողիկոսի պատմելով՝ հանկարծ փլվեցին բերդի պարիսպները, պալատները, տները, կաթողիկոսական եկեղեցիներն ու այլ շենքեր և մեռան ավելի քան 70.000 բնակիչներ[17]։ Այս վերջին ավերածությանն

---

15 Հմմտ. Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, III, ԻԲ, էջ 371։

16 Ըստ նորագույն հետազոտությունների՝ արաբները Դվին գրավել են 640 թ. հոկտեմբերի 6-ին (տե՛ս Հ. Մանանդյան, Մանր հետազոտություններ, Երևան, 1932, էջ 28)։

17 Դրասխանակերտցու պատմագրքում Դվինի հիշյալ երկրաշարժի վերաբերյալ ասված է. «...ահագին իմն յեղակարծումն ժամու սաստիկ շարժմանց եղելոց ի գիշերի ի Դվին քաղաքի՝ բաղում սասանումն և սարսափումն և դղրդումն և կործանումն գրնակչօք քաղաքին դեղեալ, հիմն ի վեր տապալէր։ Վասն զի առհասարակ ի վայր փլուզեալ զպատուար պարսպացն և զապարանս գլխաւորացն և զտունս ռամկաց՝ իբրև զերիզուտ վայրս առապարաց յական թօթափել տեսանէր. այլ և զաստուածաշէն եկեղեցիս կաթողիկոսարանին և զայլ ևս հաստահեղոյս վկայարանս՝ դղրդեալ քանդեալ աւերեալ ի վայր հոսէր (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց, էջ 162)։ Երկրաշարժի ժամանակ սպանված բնակիչների թիվը՝ 70.000, հիշատակել է Թովմա Արծրունին (տե՛ս «Պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 372)։

էլ պիտի վերագրել նաև վերջնական անհետացումն երբեմն այնքան նշանավոր այս քաղաքի, որի լոկ մեռածներն արդեն վերհիշեցնում են մեզ նրա երբեմնի մեծությունն ու գոյությունը։

Դվինում տեղի են ունեցել տարբեր եկեղեցական ժողովներ[18], որոնցից հիշատակության արժանի են հետևյալ չորսը. դրանք են՝ 1-ինը՝ Ներսես Բ. կաթողիկոսի ժամանակ, <VI> դարում <....>[19]։ 2-րդը՝ Մովսես կաթողիկոսի ժամանակ, <VI> դարում[20], եկեղեցական օրացույցը,—որ կոչվում է Տոմար, այսինքն՝ ժամանակի հաշվում,—վերանորոգելու համար. դա նախաձեռնվել է հատկապես հունական եկեղեցական օրացույցի մեջ, որով ղեկավարվում էին հայերը մինչև հունական եկեղեցուց բաժանվելը, չմտած շատ ու շատ եկեղեցական տոների պատճառով։ Այս ժամանակից էլ հայերը հաշվում են իրենց թվարկությունը, սովորական քաղաքացիականից 550 (՞) տարով պակաս[21]։ 3-րդը՝ Ներսես Գ. Շինող կաթողիկոսի ժամանակ, <VII> դարում <....>[22]։ 4-րդը՝ Հովհան Իմաստասեր կաթողիկոսի ժամանակ, <VIII> դարում <.....>[23]։

Ա Ն Ի

Հայաստանի այս հին Պալմիրան,—որի սոսկ հիշողությունն անգամ ապշեցնում է ժողովրդական փառքի մասին գեթ փոքր ինչ հասկացողություն և մարդկային ամեն տեսակ վեհության նկատմամբ հարգանք ունեցող յուրաքանչյուրին,—սկզբում եղել է ոչ այլ ինչ, բայց եթե մի ո՞չ մեծ ամրոց։ Նրա համարյա անառիկ դիրքը, Արևելքի համար ամենահախուռն ժամանակներում՝ առանձնապես VIII դարում[24], գրավել է հատկապես Լոռու այժմյան գավառամասը շատ հոյակապ բերդերով ու վիթխարի տաճարներով լցրած Հայոց Բագրատունյաց հարստության թագավորներից շատերին՝ ընտրել այս վայրը, պահելու և պաշտպանելու համար Հայաստանի արդեն հանգող ուժերն ու փառքը։

Արդեն ո՞չ հին, մռայլ և առասպելական ժամանակների ստեղծագործությանը՝ Անին, որտեղ աղքատ հովիվն անգամ կարող էր իր համար կառուցել

---

18 Բնագրում այնուհետև հիշատակվող եկեղեցական ժողովներից և ո՞չ մեկի դարը չի նշանակված։ Լրացումները՝ սուր փակագծերի մեջ <>, կատարել ենք մենք։

19 Բնագրում այնուհետև Արովյանը մի քանի տող բաց է թողել՝ նպատակ ունենալով թերևս բացատրել, թե ի՞նչ հարցեր է քննել Ներսես Բ. Բագրևանդացի կաթողիկոսի (548—557) նախագահությամբ 555 թվականին գումարված այդ ժողովը (քննարկվել է քաղկեդոնականության նկատմամբ հայոց եկեղեցու ունենալիք հետագա վերաբերմունքի հարցը)։

20 Գումարվել է 574 թվականին։

21 Հայոց թվականի տարբերությունը Հուլյան տոմարից 551 տարի է։ Բնագրում առկա հարցական (՞) նշանը, ինչպես նաև նախորդ և հետագա բացթողումները պարզ հաստատում են, որ ակնարկը դրված է մեծ շտապողականությամբ, այնքան, որ Արովյանը ժամանակ չի ունեցել ճշտելու մոտավոր ձևով նշած թվականները և լրացնելու բացթողումները։

22 Բնագրում այնուհետև տեղ է թողած՝ լրացման համար։ Ժողովը գումարվել է 645 թվականին և քննել է դավանաբանական հարցեր։

23 Այստեղ ևս մոտ կես էջ թողած է լրացման համար։ Հիշված ժողովը գումարվել է 719 թվականին Հովհաննես Գ. Օձնեցու (Իմաստասեր մականվամբ) նախագահությամբ։

24 Բագրատունիներն Անին գնել են Կամսարականներից 787 թվականին (տե՛ս Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 415)։ Երևի այս փաստը նկատի ունի Արովյանը։

հատուկ եկեղեցի, միշտ պետք է յուրաքանչյուր հայկազունի սրտից քամի արյուն-արցունք, իսկ մարդկության յուրաքանչյուր բարեկամի սրտից՝ խղճահարության և կարեկցանքի հառաչանքներ՝ այժմ, ավա՜ղ, մարդկության աստվածային իրավունքներն անզգայորեն բոլոր ոտնահարողների ծաղրուծանակի առարկան, խաղալիքը դարձրած նույն այդ ժողովրդի թշվառ բախտի համար։

Այս բերդի հիմնադրի մասին պատմությունը ոչինչ չի՛ ասում։ Ավանդությունից դատելով՝ Կարսի ու Փամբակի գավառամասերի և Արագածի միջև ընկած այս ողջ երկիրը բնակեցրած է եղել Հայկի ծոռ և Արամայիսի որդի Շարան, որի անունով էլ այն հնուց անվանվել է Շիրակ-գավառ, այսինքն՝ Շիրակի մարզ, որ ժամանակի բարբարոս լեզուն վերակոչել է Շորագյալ, որպիսի անվան տակ այժմ հասկացվում է Արփա-չայի (հին Ախուրյան գետի) այս ափով ընկած Շորագյալի գավառամասը։ Այս երկրամասի հացի առատության, բարեբերության և նրա առաջին տիրոջ՝ Շարայի, շատակերության պատճառով հին հայերի շրջանում լույս է ընկել մի առած. «Թէ քո Շարայի որկորն է... մեր Շիրակայ ամբարքն չեն»[25]։

Տրդատ Մեծը նվիրեց Շիրակը Մամիկոնյան իշխաններին՝ ժառանգական տիրապետության համար[26]։ Հավանաբար այս առաջին տերերից մեկն էլ շինել է մինչև VIII դարի սկիզբն այնքան աննշան Անի ամրոցը։

Համայն Հայաստանի սպարապետ Սմբատի որդին՝ Աշոտ Ա. Բագրատունին, որն իր հոր տիտղոսով ողջ ազգն 31 տարի կառավարեց և, այնուհետև, իր քաջության, խոհեմության և մեծահոգության համար արքայական թագի արժանացավ, VIII դարու վերջին[27] այդտեղ կառուցեց մի քանի աննշան շինություններ։ Անին սկսեց ընդարձակվել Աշոտ Գ. Ողորմածի օրոք, որը 964 թվականին հին բերդը շրջապատեց նոր պարիսպներով և զարդարեց այն աշտարակներով ու եկեղեցիներով, իսկ նրա որդի Սմբատ Բ. Տիեզերակալը մեծացրեց Անին, որպես մայրաքաղաք, չորս բոլորը կառուցեց հույժ զանգվածային նոր պարիսպներ, դրա համար էլ, այդ օրերից ի վեր, առաջիններն անվանվեցին Փոքր պարիսպներ։ Նա էլ հիմնադրել է Կաթուղիկե եկեղեցին և ուրիշ շատ հոյակապ շենքեր։ Նրա կառուցած պարիսպները կրից և սրբատաշ քարերից էին։ Այս ժամանակից սկսած ավելի ու ավելի էր մեծանում Անին, և եթե հավատանք հայոց պատմագիրներին, ապա յուրաքանչյուր մարդ ապշում է հենց միայն նրա համար, երբ որ կարդում է, թե այնտեղ կառուցված են եղել միայն եկեղեցիներ՝ հազար ու մեկ հատ[28], այդ պատճառով էլ այն ժամանակ-

---

25 Հմմտ. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց..., գիրք Ա. գլուխ ԺԲ, էջ 40։

26 Այստեղ փաստական անճշտություն կա. Տրդատ Մեծը Շիրակը նվիրել է ո՛չ թե Մամիկոնյաններին, այլ՝ Կամսարականներին (տե՛ս Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլուխ Ղ, էջ 241)։

27 Եթե խոսքը Սմբատ Բագրատունու որդի «իշխանաց իշխան» Աշոտ Ա. Բագրատունու մասին է, ապա նա իշխել է 29 տարի (862—891 թթ.), 887/888 թ. ստացել է արքայական թագ և Անիում շինարարական աշխատանքներ կարող էր կատարել միմիայն IX դարու վերջերին, իսկ եթե խոսքը վերաբերում է Սմբատ Սպարապետ Բագրատունու որդի Աշոտ Մսակերին (806—825/6), որին Հարուն-ալ-Ռաշիդը նշանակել էր Հայաստանի կառավարիչ (թագավոր չի՛ եղել), որ ավելի քան հավանական է, այդ դեպքում պետք է լինի՝ IX դարու սկզբին։ (Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Բ, մասն Բ, Երևան, 1960, էջ 35, 38—40)։

28 Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 147։

վս հայերն, երբ երդվել են, օգտագործել են մի այլ ասացվածք ևս[29], թե՝ «Երդվում եմ Անիի հաղար ու մեկ եկեղեցիներով»ա)։

Այս քաղաքի շքեղության, հզորության և բազմամարդության մասին է վկայում նաև այն, որ երբ, XI դարում հայոց թագավոր Հովհաննես—<Սմբատն> անակնկալ կերպով հարձակվեց նրա վրա, Աշոտը շատ կարճ ժամանակում կարողացավ հենց քաղաքից կովի դաշտ իջեցնել 40.000 հետևակ և 20.000 հեծելազոր։ Սմբատ Բ-ի սկսած կաթուղիկե եկեղեցու <շինությունն> ավարտել է ազնվաբարոյությամբ և բազմապիսի քրիստոնեական բարեգործություններով հռչակված Գագիկ Ա-ի կինը՝ Կատրամիդա թագուհին։ Եթե հավատանք պատմագիրներից շատերի ասածին, ապա այս եկեղեցուն նրա նվիրած զարդերը, հարստությունն ու անոթներն անհնար է նկարագրել։ Հատուկ ուշադրության են արժանի երկու իր. 1) Ողջն արծաթից, մի չափազանց ծանր, մարդաչափ խաչ ամրացված եկեղեցու գմբեթին և 2) Ամբողջությամբ խիստ թանկարժեք քարերից պատրաստված, նույն Սմբատի պատվերով Հնդկաստանից բերված և 12 բութման (144 ֆունտ) ծանրություն ունեցող ու նույնքան էլ իր մեջ հեղուկ տանող մի վիթխարի ջահ։ Այս երկու թանկարժեք իրերը ուրիշ շատ-շատերի հետ, 1064 թվականին, Ալփ-Ասլանի կողմից այս քաղաքը գրավելու ժամանակ, զոհ դարձան պարսիկներին։

Երկրորդ եկեղեցին՝ առաջինից ո՛չ պակաս վեհությամբ ու շքեղությամբ, կառուցեց Գագիկ Ա-ն 1000 թվականին, սբ. Գրիգորի անունով, էջմիածնի վանքի նմանությամբ[30]։ Թագավորներն են կառուցել այս երկու եկեղեցիները, իսկ մնացածները՝ կաթողիկոսները, մեծատոհմիկներն ու վաճառականները։ Եկեղեցիներից մեկը պատմության մեջ հայտնի է նրանով, որ կառուցել է Սարգիս կաթողիկոսը, X դարու վերջին, սբ. Հռիփսիմեի անունով, ուր և մեծ թափորով փոխադրվել են սրբուհու նշխարները։

Եվ վերջապես Անիին էլ վիճակվեց հայոց բոլոր քաղաքների ընդհանուր ճակատագիրը՝ հույներից, պարսիկներից և վրացիներից։ Այնպես որ Հովհաննես-Սմբատ թագավորը XI դարու սկզբին հարկադրված եղավ արդեն հանձնելու այն հունաց Վասիլ կայսեր ձեռքը, սակայն Գագիկ Բ-ը, մի առնական տղամարդ, Սմբատի մահից հետո գահ բարձրանալով՝ հրաժարվեց կատարել իր նախորդի խոստումը, որի պատճառով և Միքայել Ե-ը 100.000 զորքով հարձակվեց Անիի վրա, բայց քաջ Գագիկը նրան գլխովին մի այնպիսի խիստ ջարդ տվեց, որ <զորքի>տասներորդ մասը հազիվ ետ դարձավ։ Կոստանդին Մոնոմաքոսը կաշառելով Գագիկի պալատականներից շատերին՝ բարեկամական պատրվակով հարկադրեց նրան գալ Կոստանդնուպոլիս, և Գագիկի բացակայության ժամանակ էլ քաղաքի 40 բանալիներն ուղարկվեցին

ա) Բնակիչներն այժմ էլ ցույց են տալիս հովվի շինած եկեղեցին, որը <հովիվը> նոր կյուրակեին տուն դալով ու իր ընտանիքը տոնական զգեստներով, սակայն տխուր վիճակում գտնելով, որովհետև նրանք քաղաքի բազմամարդության և իրենց աղքատ ծագման պատճառով չէին կարողացել տեղ գտնել այնքան շատ եկեղեցիներից մեկում, արժանապատվությունից և կնոջ սիրաշահելուց զրկված քաղաքից դուրս, իր ընտանիքի համար, կառուցեց հատուկ եկեղեցի՝ իր հաշվին պահելով և՛ եկեղեցին, և՛ նրա սպասավորներին (ծան. Խ. Արովյանի)։

29 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 258։

30 Խոսքն Անիի Դաղկաշեն տաճարի մասին է, որի կառուցումը տևել է 14 տարի (1001—1015)։ Հմմտ. Հ. Օրբելի, Անվանի ավերակները, Վաղարշապատ, 1911, էջ 14 և 42։

կայսերը և 1046 թվականին ամբողջ Հայաստանն ընկավ հույների իշխանության տակ[31]։ Վերջապես՝ Ալփասլանը կամ Էլփ-Ասլանը երկարատև պաշարումից հետո գրավեց քաղաքը, քանդեց անհամար շենքերն ու արտաքին պարիսպները, իսկ բնակիչներին մատնեց անլուր տանջանքների և, ի վերջո, գըլխովին բնաջնջման։ Թշվառներից հազար հոգու, ինչպես գրում են ականատեսները, նա մորթել տվեց հատկապես նրա համար, որպեսզի լողանա նրանց արյան մեջ։ Ահա՛ թե մինչև ո՞ւր է հասել նրա տմարդությունը։

Հետագա ժամանակներում՝ Էմիր Մանուչեի օրոք, Անին վերստին սկսեց բուժել վերքերը և նորից կրել վիշտ ու թշվառություն, այնպես որ բնակիչները չտեսնելով պաշտպանվելու ուրիշ որևէ այլ հնարավորություն, 1124 թվականին կամավոր անձնատուր եղան վրաց Դավիթ թագավորին[32]։ Այս ժամանակից սկսած Անին գժտությունների ու արյունահեղությունների խնձոր դարձավ վրացիների ու պարսիկների միջև, իսկ բոլորից ավելի ամայացրեց այն թաթար-մոնղոլների առաջնորդը՝ Ջարմաղանը, 1239 թվականին[33]։

Հայտնի չէ, թե երբ է այս քաղաքը հիմնովին կործանվել։ Ենթադրում են, որ Անին ևս որպես թե ոչնչացել է Հովհաննես Երզնկացի եպիսկոպոսի՝ այդ քաղաքի վրա թափած անեծքի հետևանքով տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից, որից հետո բնակիչները, մոտավորապես 40.000 ընտանիք, ցրվեցին դեպի Ջուղա, Վան, Սիս, Աստրախան, Կաֆա, Նոր-Նախիջևան քաղաքները և, անգամ, Լեհաստան։

Այսպիսի՞ն է եղել Անիի ճակատագիրը։

ԱԿՈՌԻ ԿԱՄ ԱՐԿ-ՈՒՌԻ

Ըստ ավանդության՝ այսպես է անվանվել այն պատճառով, որ այնտեղ իբրև թե Նոյը տնկել է առաջին վազը. հայտնի է եղել դեռևս վաղ անցյալում։ Հայոց պատմագիրները կոչում են այն նաև Մեծ ավան[34]։ Այստեղի ծնունդ էր Անաստաս կաթողիկոսը, սբ. Գրիգորի ծոռան՝ Ներսես Մեծ կաթողիկոսի հաջորդը[35]։ Նա էլ՝ հայրենի վայրերի հանդեպ ունեցած առանձնահատուկ վերաբերմունքից <դրդված>, Ակոռիում կառուցեց հոյակապ տաճար, միաբանության համար վանք, աղքատանոց և այլ բարեգործական հաստատություններ։ Այստեղ է նաև ապրել սբ. Գրիգորի հորաբրոջ որդին՝ հրաշագործ անվանված Մծբնա Հակոբ հայրապետը, որը ցանկություն ունենալով տեսնելու Նոյան տապանը՝ հրեշտակից ստացավ միմիայն տախտակի մի փոքրիկ կտոր, որն այժմ, սրբի աջի հետ միասին, պահվում է Էջմիածնում։ Ակոռի գյուղից երկու վերստ հեռու և դեպի հարավ էր ընկած սբ. Հակոբի վանքը՝ վանականների համար մի քանի խցերով <հանդերձ>, իսկ նրանից վերև, ո՛չ ավելի քան մեկ վերստ

31 Ըստ նորագույն հետազոտությունների՝ հույներն Անին գրավել են 1045 թվականին (տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Դ, էջ 27 և 94)։

32 Ըստ նորագույն հետազոտությունների՝ 1123 թվականին (տե՛ս ն. տ., էջ 93—94)։

33 Ըստ նորագույն հետազոտությունների՝ 1236 թ. (տե՛ս ն. տ., էջ 204 և 410)։

34 Տե՛ս Պատմութիւն Ղևոնդայ Մեծի վարդապետի Հայոց, Բ. տիպ, Պետերբուրգ, 1887, էջ 22։

35 Խոսքը Ներսես Գ. Իշխանցի (զարձյալ՝ Մեծ պատվանունով) կաթողիկոսին է վերաբերում (641—652, 658—661), որի Լուսավորչից սերած լինելու մասին Արուվյանի օգտագործած սկզբնաղբյուրում (Հովհաննես Դրասխանակերտցի) խոսք չկա (տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 83 և 90—91)։

հեռավորության վրա՝ մի նույնանուն ո՛չ մեծ աղբյուր, որտեղից ջուր են տանում զանազան վայրեր՝ մորեխներին ոչնչացնելու համար։

Մեծ Մասսի հյուսիսային վիթխարի կիրճում գտնվող այս բոլոր հնություններն իրենց հավիտենական գերեզմաններ գտան 1840 թվականի հունիսի 20-ի ցերեկվա ժ. 6-ին տեղի ունեցած հեղակարծ փլվածքի տակ։ Ակոռիի հարրստությունն ու բարենպաստ գիրքը, ինչպես նաև նրա բնակիչների քաջագործություններն, այժմ էլ հայտնի են բոլորին։ Ո՛չ ավելի քան 10-ը բոպեի ընթացքում ընդմիշտ զոհվեցին ավելի քան 5.000 հոգի։

<ՀԱՎԵԼՎԱԾ>

<ԵԶԻԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ[36]>

Ըստ հնօրյա հիշողությունների՝ <քրդերի> միջև կա քրիստոնյաներից[37] ավելի հեզաբարո մի ցեղ. դրանք մեր հողերում, ամենից ավելի Արարատի ստորոտում հանդիպող եզիդիներն են, թեպետ և բավական քիչ թվով, քանի որ Բարձրագույն Դռան այժմյան վեզիր Ռաշիդ-փաշան, քրդերին հնազանդեցնելու ժամանակ, իր զենքն ուղղեց հատկապես եզիդիների դեմ, որպես այլադավանների։ Հասարակ ժողովուրդը նրանց անվանում է սատանային երկրպագողներ կամ Իբլիս պաշտողներ, քանի որ եզիդիները միշտ էլ սրա մասին զգուշությամբ են խոսում, ասելով. «Հարկ չկա անիծելու նրան. նա կարող է զղջալ, և աստված կների նրան»։ Դժվար է հավաստի իմանալ, թե հատկապես քրիստոնեական որ աղանդին են պատկանում եզիդիները, սակայն տարակույս չկա, որ նրանք երբևէ քրիստոնյաներ են եղել և աղանդավորության պատճառով եկեղեցուց վտարվելով՝ առանձնության մեջ վայրենացել են և կորցրել իրենց հիմնական <դավանական> սկզբունքները։ Նրանց մթին ավանդությունների մեջ, այնուհանդերձ, պահպանվել են քրիստոնեության մի քանի աղոտ ստվերներ։ Այսպես, օրինակ՝ նրանք ունեն հոգևորականության երկու դաս, կարծես թե երեցներ և կղերականներ (շեյխեր և փիրեր), որոնց համար գոյություն ունի հատուկ օծման կարգ՝ հասարակական աղոթքներով, մինչև անգամ զգեստավորում, նման ժամաշապկի վրա <գցված> սև շուրջառի։ Ամուսնության ժամանակ նրանք դառնում են վկաներ, թեպետ այդ <արարողությունն>, ինչպես նաև թլփատումն ու թաղումը, կատարում են մահմեդական ծեսով, քանի որ եզիդիների մոտ ամեն բան խառնված է։ Նրանք մոռացել են խաչակնքելը, բայց տակավին հիշում են հաղորդության խորհուրդը, վախենում են գետին թափել գինու կաթիլը, երբ ըմպում են, որովհետև այն համարում են սրբազան խմիչք, և տարին մեկ անգամ, ավագ ուրբաթ օրը, նրանց հոգևոր պետերը հավաքված ժողովրդին աղոթելով բաժանում են հաց ու գինի, ասելով. «Քրիստոսի մարմինն <է>, Քրիստոսի արյունը». այս պատճառով եզիդիները քրիստոնյաների նկատմամբ չեն տածում այն ատելությունը,

36 Մուրավյովի գրքում («Грузия и Армения», ч. II, СП-бург, 1848, стр. 129—131), որտեղից քաղել և թարգմանել ենք այս հատվածը, այն սկսվում է հետևյալ բառերով՝ «Բայց այս վայրի թափառաշրջիկների մեջ...», որ զերադասեցինք փոխարինել «Քրդերի միջև...» բառերով։

37 Մուրավյովի գրքում՝ христианства (քրիստոնեությունից)։

որով լցված են նրանց հանդեպ մոլեռանդ քրդերը. դրան հակառակ՝ նրանք հարգում են հայ հոգևորականությանը, ընդունում են սրանց օրհնությունը. երբեմն հաճախում են եկեղեցի, երբեմն էլ պահում են որոշ պահքեր, ի պատիվ սրբերի, առանձնապես <սբ.> Գեորգի և <սբ.> Սարգսի։ Առհասարակ նրանք բարքերով ավելի մեղմ են և ավելի ազնիվ, քան քրդերը, թեպետ և ոչ պակաս ռազմատենչ. ահա ինչպիսին է Քրիստոսի հավատի բարերար ազդեցությունն՝ անգամ իր այդքան աղավաղված տեսքով։ Տեր մեր Հիսուս Քրիստոսին համարելով իրենց մարգարեն՝ նրանք անվանում են նրան օրիորդ Մարիամից հայտնված Աստուծո Լույս, սակայն պարզ պատկերացում չունեն քավության մասին և մահմեդականների նման կարծում են, որ Տերը՝ թույլ տալով իրեն բևեռելու խաչին, նրանից էլ համբարձել է երկինք։ Նրանց մեջ պահպանվել է մի տարօրինակ հավատալիք. որպես թե խաչելության ժամանակ իրենց ցեղակիցներից մեկը՝ ցանկանալով թեթևություն տալ տիրոջը, գողացել է նրա ոտքերի մեխերից մեկը և դրա փոխարեն գողանալու իրավունք ձեռք բերել իր ողջ ժողովրդի համար, միայն թե առանց բռնության։